ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 թվականի N 1283-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ՍԻՐԵԿԱՆԻ ՍԻՄԻՏՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2020 թվականի մարտի 29-ին և Անահիտ Սիրեկանի Սիմիտյանի 06.02.2024թ. թիվ 0768 դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2024 թվականի փետրվարի 5-ին և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղ 04-047-0010-0015 կադաստրային ծածկագրում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Անահիտ Սիրեկանի Սիմիտյանի /ծնված՝ 14,01,1965թ./ սեփականության իրավունքը Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղ 04-047-0010-0015 կադաստրային ծածկագրում գտնվող գույքային միավորների՝ 1190,0 քմ մակերեսով օրինական հողամասի վրա 1966թ. կառուցված 132,9 քմ մակերեսով բնակելի տան,1998թ. և 1990թ. կառուցված 25,5 քմ

մակերեսով խորդանոցի,1990թ. կառուցված 15,8 քմ մակերեսով մառանի,1990թ. կառուցված 6,7 քմ մակերեսով հավաքնի և 1990թ. կառուցված 3.5 քմ մակերեսով պարսպի նկատմամբ:

2.Սեփականության իրավունքով Անահիտ Սիրեկանի Սիմիտյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղ 04-047-0010-0015 կադաստրային ծածկագրում գտնվող 1190.0 քմ մակերեսով բնակելի կառուցապատմանհողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 72,6 քմ ներքին և 78,9 քմ արտաքին մակերեսով,մառանը՝ 13,1 քմ ներքին և 15,8 քմ արտաքին մակերեսով,զուգարանը՝ 1,4 քմ ներքին և 2,5 քմ արտաքին մակերեսով և պարիսպը՝ 23.4 քմ մակերեսով ճանաչել օրինական, իսկ 2021թ կառուցված 92,8 քմ մակերեսով ծածկը համարել ինքնակամ:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 78,9քմ մակերեսով ինքնակամ բնակելի տան 10-ապատիկի չափով՝ 874.0 ՀՀ դրամ ընդհանուր՝ 68959 /վաթսունութ հազար ինը հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ,օժանդակ շինությունների ընդհանուր արտաքին 4[illegible],7 քմ մակերեսով օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524,4ՀՀ դրամ ընդհանուր՝ 21868(քսանմեկ հազար ութ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ,ընդհանուր օրինականացման գումարը կազմում է 90827 /իննսուն հազար ութ հարյուր քսանյոթ/:

5.Անահիտ Սիրեկանի Սիմիտյանին պատկանող Հայաստանի 04-047-0010-0015 կադաստրային ծածկագրից գույքին տալ ճշտված հասցե՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Լուկաշին գյուղ, 3-րդ փողոց 11:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր Լուկաշին գյուղ, 3-րդփողոց 11 հասցեումգտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023URF7YT:

7.Ուժը կորցրած ճանաչել 2024թ ապրիլի 17-ի թիվ 0524-Ա որոշումը:

8. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024 թ. Հոկտեմբերի 14
ք. Արմավիր